Հավելված Ν 1
ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2023-22 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

**գնանշման հարցման մասնակցելու**

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ը հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել **«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ**-ի կողմից **ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2023-22** ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 38 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ <<01224924>>:
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ leykoalex@gmail.com:
- գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Ֆուչիկի 27/14
- **սպասարկող բանկն է՝ ԱՅԴԻ ԲԱՆԿ ՓԲԸ**
- **բանկային հաշվեհամարն է՝ 11817000357800**
- հեռախոսահամարն է՝ 010-35-03-03,

Սույնով «ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «ԼԵՅԿՈ» ՍՊԸ –ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են **ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2023-22**ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.[1]

2) **ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2023-22** ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) «ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

---

[1] Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են <<վերջինս կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's ) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:

Ստորև ներկայացնում է «ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies/1265044/declaration/11473f57-5524-41e3-ac20-fbaa6631984d ։

Կից ներկայացվում է «ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի:

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Ալեքսանյան

«ԼԵՅԿՈ» «ЛЕЙКО» «LEIKO» 01224924

Կ. Տ.

30.05.2023թ

---

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

** - մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը, եթե այդ մասնակիցը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ է և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված կարգով պետք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված լիներ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները,

- Եթե մասնակիցը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում հայտարարությունը լրացնելիս << տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը >> բառերը փոխարինում է <<հայտարարագիր համաձայն հավելված 1,3-ի>> բառերով,

-եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացնում:

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը: